ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4532-Ա « 15 » սեպտեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 4716-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ և 12-րդ կետի 2-րդ ենթակետով.

1. Ուժը կորցրած ճանաչել «Պատասխանատու ստորաբաժանում սահմանելու մասին» Երևանի քաղաքապետի 2025 թվականի նոյեմբերի 21-ի N 4716-Ա որոշումը:

2. Հանրային ենթակառուցվածքային և քաղաքային զարգացման ներդրումային ծրագրերի մշակման, գնահատման և հաստատման նպատակով տեխնիկատնտեսական և իրագործելիության ուսումնասիրությունների, վերլուծական աշխատանքների, հայեցակարգային և էսքիզային նախագծերի, նախագծերի և նախագծանախահաշվային փաստաթղթերի, դրանց լրամշակման, վերանայման ու վերանախագծման, քաղաքաշինական հայեցակարգերի, պլանների ու հատակագծերի, ներդրումային ծրագրերի մշակման ու ծրագրերի գնահատման ծառայությունների, ինչպես նաև՝ ծրագրերի կառավարման ծառայությունների ձեռքբերման գնման գործընթացների կազմակերպման նպատակով ձևավորել մասնագիտական խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն Հավելվածի:

3. Սույն որոշման 2-րդ կետով սահմանված մասնագիտական խումբն իրականացնում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված պատասխանատու ստորաբաժանման գործառույթները:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել մասնագիտական խմբի ղեկավարին:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված N 1
Երևանի քաղաքապետի
15.09.2026 թ.

N 4532 - Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԻՐԱԳՈՐԾԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ԷՍՔԻԶԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ, ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ, ԴՐԱՆՑ ԼՐԱՄՇԱԿՄԱՆ, ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՆԱԽԱԳԾՄԱՆ, ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ, ՊԼԱՆՆԵՐԻ ՈՒ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ՝ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ

Իզաբելլա Մուրադյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ /Մասնագիտական խմբի ղեկավար/
Ալինա Եղիազարյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի զարգացման և գործընկերության ղեկավար
Հրանտ Սարկիսով	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի գլխավոր գործառնական ղեկավար
Դավիթ Մարգարյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի գլխավոր իրավաբան
Աշխեն Ջանջուղազյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի գլխավոր ֆինանսիստ
Սվետա Հարոսյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի հանրային ներդրումային ծրագրերի ղեկավար
Լուսինե Ջանազյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի մասնավոր գործառնությունների և ռենովացիոն ծրագրերի ղեկավար
Շողիկ Երանյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի սոցիալական կառավարման և տարաբնակեցման ղեկավար
Արա Աբգարյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի հանրային շենքերի ծրագրերի ղեկավար
Վարդգես Հարությունյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի ճանապարհային ենթակառուցվածքների ծրագրերի ղեկավար

Արամ Պետրոսյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի քաղաքային զարգացման ծրագրի համակարգող
Վաչե Ջիհանյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի հատուկ ծրագրերի համակարգող

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**